Սիպիլ

Լուսին

Ողջույն կուտամ անհուն սիրով, քեզի, լուսնա՛կ,
Ո՛վ մըտերիմ տըխուր հոգվույս իմ միայնակ,
Թե չըլլայիր դուն, և շողերդ այդ փայփայուն
Ձը շոյեին սըլացքն հոգվույս երազներուն,
Փոս մը կ՚ըլլար կյանքըս, թափուր և ամայի,
Փոս մ՚որ մըռայլ դամբաններու լոկ կը նայի,
Որուն եզերքն ա՛լ չի փըթթիր ծաղիկ և բույս,
Ուր կը մոռնա ցողել արևն իր արշալույս:
Ու կ՚անցնեի ըստվերի պես կյանքին մեջեն.
Քըշելով հոն ուր կը հեծեն, կը հառաչեն,
Կամ նըվաղած կանթեղի պես շիջելափառ
Կը կըքեի ամեն հովի ես անբարբառ:
Բայց դուն, լուսնյա՛կ, քանի վերեն ինծի ժըպտիս
Մըտքիս թըռիչք, ավյուն և հուրք կու՚տաս սըրտիս.
Քանի թողած շողերու հույլն եթերաճեմ
Պատուհանիս առջին կուգաս երբ կ՚աղաչեմ,
Քու ըզգայուն, սիրող անույշ սըրտիդ վըրա
Տաք արցունքով լեցված՝ հոգիս կը գուրգուրա:
Ո՛հ, որքա՜ն բարձր ես, որքա՜ն սուրբ և ի՜նչ վըսեմ,
Ներշույլներուդ ներքև Աստվածն ես կ՚երազեմ:
Տիեզերքի ոգի՞ն ես դուն, թե ոչ հայելին,
Որուն մեջեն սըրբություններ կ՚արտափայլին:
Գըթությո՞ւնն ես կամ դիցուհի՞ն դուն Աթենաս,

Որ խըրճիթին դամբանին կը մոտենաս,
Եվ երբեմն ալ նոճիներուն մըշտագիշեր,
Որոնք տըրտում են, ինչպես մահն ու իր հուշեր:
Դուն չես սիրեր ոսկեպաճույճ ճոխ ապարանք,

Ոչ թավիշե սըրահակներ, ամո՛ւլ պատրանք.
Քու քըմայքդ են անտառն ու դաշտ, սարերն արձակ
Ուր կը թողուն վանկ մը հովը, թըռչունն ու ձագ,
Վիշտը հրապույր մ՚է քեզ համար, և փոսն ու փուլ
Շողերուդ տակ կը փալփըլին ինչպես սըմբուլ:
Սիրտ մըն ես դուն, ո՛հ, զայն կ՚զգամ, սիրու քերթողի,
Երազներով, հմայքներով ու խանդով լի,
Կամ մայրիկիդ գիրկեն խըլված աղջիկ մը կույս,
Որ քողի տակ կը պարուրես սարսուռդ ու հույզ,
Դուն չես խոսիր բընավ, լուսնա՛կ, բայց կը դիտեմ
Թե շատ լալեդ կը տըժգունիս առտըվան դեմ,
Տըխուր նայվածքդ ինձ կը պատմե առատապես
Թե լոկ լույս մը չես դուն ուրիշ գունտերու պես:
Քեզի նըման ես ալ ցավեր ունիմ, լուսի՛ն,
Չեն հըմայեր զիս ալ կյանքի փառքերն ոսին.
Հոգիս թև մը միայն կ՚ուզե, կապո՛ւյտ փետուր.
Ճառագայթ մը քեզմե, բեկբեկ նըշույլ մը տո՛ւր,
Որուն կառչած վերաթևեմ իբրև պարիկ
Մինչև բյուրեղ քու ապարանքդ օդապարիկ:
Ես քեզի ձոն տամ իմ հոգիս անոր փոխան,
Պատմե՛ իրեն խորհըրդավոր իղձերդ համայն.
Թող գունտե գունտ սավառնելով մինչև հեռուն,
Արցունքդ ամբողջ տանի ցըրվե հովուն, ծովուն,
Եվ դարերուն վըրա կեցած միշտ անխափան՝
Ըլլա հավետ անմահ սիրույդ քու երգարան: